



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ
«Նախադպրոցական հաստատության մանկավարժական
աշխատողների մասնագիտական կարողությունների և
հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Ազգային տոների, ծեսերի կազմակերպման
առանձնահատկությունները կրթական գործընթացում**

Հաստատություն՝ **Պտղունքի «Տեր և Տիկին Ղազարյանների» անվան ՆՈՒՀ
ՀՈԱԿ**

Դաստիարակ՝ **Սեդա Սահակյան**

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Ընդհանուր գաղափար տոնի և ծեսի մասին.....	5
Հետազոտական մաս.....	9
Եզրակացություն.....	18
Գրականության ցանկ.....	19

Ներածություն

Հայկական մշակույթը հնուց ի վեր հայտնի է իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով, որոնք իրենց հերթին աչքի են ընկնում ժողովրդական ծեսերի, սովորույթների, և հավատալիքների բազմազանությամբ: Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել:

Երեխայի մասնակցությամբ կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային, եկեղեցական, ժողովրդական տոն, մարզական խաղ ու զվարճություն նպաստում է երեխայի գիտելիքների, հիշողության, երևակայության, ստեղծագործ մտքի զարգացմանը և նրա անձի ձևավորմանը:

Արդիականություն: Ժամանակների փոփոխությունը մարդկանց հեռացրել է ծիսական առօրյայից, և հաճախ որոշակի ծեսեր դուրս են եկել գործածությունից: Ծեսը մարդու կյանքում առանձնակի նշանակություն ունի: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար փոխանցվել են ազգային կյանքի բոլոր էական կողմերը:

Ծեսերի վերականգնումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

- Երեխաները ծանոթանում են ազգային տոներին, անցկացման կարգին,
- Սովորում են ծիսական երգերը, խաղերը, խաղերգերն:

Արդյունքում՝ վերականգնվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով 21-րդ դարում, առնչվելով մի շարք մարտահրավերների և գիտակցելով դրանց առաջնային կարևորությունը՝ մենք փորձում ենք գտնել լուծման ուղիներ, որոնց սկիզբը պետք է դնել վաղ տարիքից: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ազգայինը, ավանդականը, ապա այդ պատասխանատու խնդրի լուծումը պետությունը վստահում է հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ սկսած ամենացածր օղակից՝ ՆՈՒՀ-ից:

Հետազոտության նպատակն է բացահայտել ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Նպատակից բխող խնդիրներն են՝

- ներկայացնել ազգային տոներն ու ծեսերը,
- իրականացնել փորձարարական հետազոտություն:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը բաղկացած է 18 էջից:

Գլուխ 1. Ընդհանուր գաղափար տոնի և ծեսի մասին

Հայ ժողովրդական տոները հիմնականում ծագել են նախաքրիստոնեական (հեթանոսական) շրջանում, հետագայում պահպանել են հնագույն ծիսակարգին ու հավատալիքներին առնչվող մի շարք սովորույթներ ու արարողություններ, ապա հարմարեցվել են քրիստոնեական գաղափարախոսությանն ու տոնացույցին:

Այսօր մեր ժողովուրդը հայտնվել է այն իրավիճակում, երբ իր ազգային գոյությունը շարունակելու երաշխիքներից մեկի՝ ազգային մշակույթի գիտակցված ընկալումը դարձել է առաջնային խնդիր: Ազգային տոներն ու ծեսերը նախկինում նշվում էին որոշակի իրավիճակում, որոշակի աշխարհայացքով, որոշակի կենցաղով, հակումներով, որոշակի ճաշակով ապրող մարդկանց կողմից, որոնցից մենք այսօր բավականաչափ հեռացել ենք: Այն, ինչ խոր իմաստ ունենալու հարյուր տարի առաջ ապրող երիտասարդի, աղջկա, երեխայի, համայնքի կամ հասարակության համար ընդհանրապես, կարող է անիմաստ, երբեմն նույնիսկ տարօրինակ թվալ այսօրվա սերնդի համար, որն ապրում է բոլորովին ուրիշ կյանքով, ուրիշ հավակնություններով, ուրիշ աշխարհայացքով¹:

Տոնը, թերևս, մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողականն է ազգային արժեքների պահպանման գործում, ինչը խիստ կարևոր է մշակույթի բազմաթիվ տարրերի ապագայնացման մեր դարաշրջանում: Բազմաթիվ ժողովուրդներ տոնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Ահա այդ կարևորագույն դերը կատարելու համար ժողովրդական տոնի հանդիսակարգը պետք է հարազատ և ընդունելի լինի այսօր ապրող մարդկանց համար²:

¹ Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005, էջ 10-11:

² Նույն տեղում:

Ժողովրդական տոնի ժամանակ ոչ թե պետք է «բանահյուսական-ազգագրական» խմբեր ելույթ ունենան, այլ տոնի բոլոր մասնակիցները պետք է ընդգրկվեն այդ «բանահյուսական-ազգագրական» կոչվող երգ ու պարի կատարման մեջ: Բոլոր ընտանիքներում տվյալ տոնի օրը պետք է եփվեն նույն ճաշատեսակները, որ դրանք հարստանան տանտիկնոջ կարողություններով և այցելությունների անհրաժեշտ կարգը պահպանեն, նույնիսկ հագուստի մեջ ազգային տարազի գոնե որևէ մաս պահպանեն՝ դիցուք ազգային զարդաձևերի անհրաժեշտ առկայությունն ապահովեն:

Ներկայացման տարրեր ունենալով հանդերձ՝ տոնը ներկայացում չէ: Այն կատարողներ ու հանդիսատեսներ չունի, համենայն դեպս՝ չպիտի ունենա: Տոնի ընթացքում բոլորը մասնակիցներ են, բոլորը կատարողներ են և ուրեմն՝ մշակույթի ազգային արժեքների հաղորդակիցներ: Ամանորի երգերը, Ծննդյան ու Զատիկ-Հարության ավետիսները, Ծաղկազարդի շրջիկ խմբերի երգերը, վիճակի բախտագուշակ քառյակները ժողովրդական հավաքական երգարվեստի փայլուն նմուշներ են:

Ծեսը, որևէ սովորույթի կատարումն ու կարգն է: Ընդհանրապես ավանդաբար եկող սովորություն՝ սովորույթ, որը տարիներ, դարեր շարունակ նույն կերպ կատարվել է, կամ չնչին փոփոխություններով: Տոնը մարդուն ուղեկցում է իր կյանքի ողջ ընթացքում, և հենց այդ ժամանակահատվածում էլ ձևավորվում, զարգանում և սովորույթի է վերածվում: Տոնն արդեն իսկ ուրախություն է, ցնծություն, միասնականության գաղափար: Ազգերի, մարդկության «կյանքի» ընթացքում որոշ ծեսեր մոռացվում են, նորերն են ստեղծվում, եղածները փոփոխվում են: Եթե ամեն սերունդ ծեսին իր կյանքից մի բան չավելացնի, այն աստիճանաբար կմարի:

Մարդկությունը հարատևում է այն ժամանակ, երբ մի սերունդը կարողանում է իր ստեղծածը, իր փորձը անկորուստ փոխանցել հաջորդ սերնդին: Այդ փորձը փոխանցում են և՛ ընտանիքը, և՛ հասարակությունը, և՛, հատկապես, մանկապարտեզը և դպրոցը: Հանրակրթական ուսումնական հաստատությունները,

բոլոր ժամանակներում մարդկության կուտակած փորձը սերունդներին փոխանցելու խնդիր են լուծել: Համենայն դեպս այդ նպատակով են ստեղծվել: Ու, թերևս, ամենադժվարը ու հոգևոր առումով ամենակարևորը մշակութային փորձի փոխանցումն է: Մշակույթն ընդգրկում է մարդկանց գործունեության առարկայական և հոգևոր արդյունքները: Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերընդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ավանդույթներն ու ծեսերը³:

Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ խորհրդանշական են, չունեն նպատակային և գործնական բնույթ: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր իրադարձությունները, ինչի շնորհիվ էլ ապահովում է ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսը ի սկզբանե կարգավորել է տվյալ խմբի՝ ազգի, ժողովրդի ներքին, ազգային կապերը, օգնել է մարդկանց յուրացնել ազգային, խմբային նորմերն ու արժեքները և համախմբվել: Ծեսերի շնորհիվ են պահպանվել սերնդեսերունդ փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են ժողովրդին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել ժողովրդի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:

Ազգային ծեսերից շատերը մոռացվել են, երիտասարդ սերունդը շատ բան չգիտի: Ուստի անհրաժեշտ է վերականգնել, նոր կյանք տալ դրանց, գտնել այն ուղին, որով գնացել է ազգը, բայց կորցրել է ճանապարհին և՛ իրեն, և՛ իր մշակույթը ստեղծող միջավայրը: Դրանք պետք է վերականգնել այնպես, որ այսօրվա մարդը կարողանա ոչ թե արհեստականորեն կրկնել, վերարտադրել, այլ բնական պահանջով կատարել

³ Մկրտչյան Մ., Հանրակրթական ծես. ստեղծում, փոխանցում
<https://marinemkrtchyan.files.wordpress.com/2020/03/d580d5a1d5b6d680d5a1d5afd680d5a9d5a1d5afd5a1d5b6-d5aed5a5d5bd.-d5bdd5bfd5a5d5b2d5aed5b8d682d5b4-d683d5b8d5add5a1d5b6d681d5b8d682d5b4-1.pdf>

Էջ 1:

ծեսը: Որ այսօրվա սերունդը դառնա այդ ամենի ոչ թե կրկնողը, այլ կրողը⁴: Քանի որ ազգային ծեսերը մեր մշակույթի, կենցաղի, սովորույթների, ավանդույթների խտացված դրսևորումն են, ուստի երբ ծեսը դարձնում ենք ուսումնական միջավայր ու գործիք, ազգային կրթության և դաստիարակության մի շարք խնդիրներ լուծվում են ինքնաբերաբար:

⁴ Մկրտչյան Մ., Ազգային ավանդույթներն ու ծեսերը ` ուսումնական միջավայր <https://marinemkrtchyan.wordpress.com/2021/10/12/տարվա-լավագույնները-մրցույթ/>
Էջ 1Ճ

Հետազոտական մաս

«Ղափամայի ծես»

Պարապմունքի նպատակն է՝

- երեխան ծանոթանա ազգային ծեսին
- երեխան դառնա տոնի, ծեսի, ծիսակատարության ոչ թե հանդիսատեսը, այլ մասնակիցը:

Պարապմունքի ընթացքը:

Խթանման փուլ:

Հարցեր երեխաներին:

Դաստիարակ:

Երեխաներ ի՞նչ մթերքներ են դրված սեղանին:

Երեխա:

Դդում, բրինձ, չամիչ, մեղր, չրեր, կարագ...

Դաստիարակ:

Եվ ի՞նչ եք մտածում, մենք ի՞նչ կարող ենք պատրաստել այս մթերքներով:

Երեխա:

Ղափամա:

Դաստիարակ:

Իսկ ինչպե՞ս ենք պատրաստելու այն, դուք երբևէ ձեր տանը պատրաստե՞լ եք:

Երեխա:

Ոչ, մենք չենք սիրում և չենք պատրաստում:

Այո, տատիկս պատրաստում է:

Իմ մայրիկն է պատրաստում և շատ համեղ:

Իմաստի ընկալման փուլ:

Երեխաները նստում են սեղանի շուրջ և մենք սեղանին դնում ենք ղափամայի պարաստման համար անհրաժեշտ մթերքները: Եվ երեխաներին բացատրում ղափամայի պատրաստման ընթացքը, ծեսի նշանակությունը: Դաստիարակ:

Ղափաման ծիսական կերակուր է, ծիսական խորհուրդը խաղաղությունն է: Ունի նաև մայրության ու պտղաբերության խորհուրդ, մատուցվել է Տյառնընդառաջին, Ամանորին, Սուրբ Զատիկին: Այս անգամ մենք աշնան ավարտին և ձմռան գալուստին նվիրեցին մեր կողմից իրակացաված ղափամայի ծեսը:

Ղափամայի խորհուրդն է «քաղցրը քաղցրի մեջ»: Դատարկ դդումն այն ընդհանուր ամբարն է, որի մեջ ամփոփվում են անցած տարվա բերքն ու բարիքը: Այս կերակրատեսակը արմատներով մեզ հասել է խոր հնադարից: Իսկ մենք էլ փորձում ենք պահպանելով փոխանցել մեր նախնիների սուրբ ավանդույթները դարձնելով այն շարունակական:

Ապա երեխաների հետ զրուցեցինք դոմի օգտակարության մասին, հետո դդումը կտրեցինք, սկսեցինք խոշորացուցով դիտարկել: Ուսումնասիրեցինք դդումը, կատարեցինք համեմատություններ, տարբերեցինք գույները, չափերը, կտրատեցինք և խոշորացուցով դիտարկեցինք, առանձնացրեցինք սերմերը պտղից:

Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում: Երեխայի զարգացումը ներառում է նրա կյանքի բոլոր ոլորտները: Հաճախ նա իր գործունեությունը /խաղ, աշխատանք և այլն/ կազմակերպում է մեծերին նմանակելով, նրանց փորձը կրկնելով: Դա շատ լավ են անում խոհարարության կենտրոնում: Միասին պատրաստելով որևէ կերակրատեսակ՝ երեխաները շփվում են միմյանց հետ, սովորում կիսել ունեցածը:

Երեխաները վայելում են իրենց պատրաստածը միասին համտեսելու հաճույքը: Միասին պատրաստելով՝ երեխաները սովորում են կենցաղային կուլտուրա /սպասքադրում, հիգիենա, խոհարարական հմտություններ/: Զարգանում է երեխայի

ստեղծագործական երևակայությունը: Չարգանում են դիտողականությունն ու ուշադրությունը:

Խոհանոցը զարգացման անփոխարինելի միջավայր է: Նա միաժամանակ ուշադիր հետևում ընկերների գործողություններին, յուրացնում նաև նրանց փորձը: Միասին աշխատելով, իրար աջակցելով, առաջացած խնդիրների լուծումները գտնելով՝ երեխաները հասնում են միասնական արդյունքի, ինչը նպաստում է նրանց սոցիալական շփմանը, հաղորդակցական և համագործակցային փորձի ձեռքբերմանը⁵:

Երեխաների մեջ ձևավորվում են մի շարք հմտություններ՝ նպատակաուղղված, կենտրոնացված աշխատելու, աշխատանքի վերջնական արդյունքին հասնելու համար անհրաժեշտ քայլեր մշակելու, միմյանց օգնելու, աջակցելու և այլն: Չպետք է վախենալ երեխաներին լուրջ գործեր վստահելուց: Խոհարարի դաստիարակի հետ միասին երեխաները ղափամա պատրաստելով՝ մի շարք հմտություններ և տեղեկատվություն են ձեռք բերում, ճանաչում են օգտագործվող մթերքները, իմանում են, թե որտեղ են դրանք աճում, տարվա որ եղանակին են հասունանում, ինչպես պետք է պահպանել, ինչ հատկություններ ունեն և այլն:

Կերակուր պատրաստելիս՝ երեխաները ավելացնում, պակասեցնում են սննդամթերքը, անհրաժեշտ մասերի բաժանում, ամբողջը համեմատում մասի հետ, այլ համեմատություններ կատարում՝ աշխատանքի ընթացքում ձեռք բերելով նաև բնագիտական-մաթեմատիկական գիտելիքներ: Սովորում են մթերքի անվանումները կամ դրանց ճիշտ արտասանությունը: Երեխաների մեծ մասը սիրով է աշխատում խոհանոցում: Աշխատելու ընթացքում զրուցում են իրար հետ, խորհուրդներ տալիս միմյանց, փորձում հիշել, թե մայրիկն այդ գործն ինչպես է անում: Իհարկե ծիսական ուտելիք պատրաստելը զուգակցվում է ծիսական երգերով, որը նախորոք սովորել ենք երեխաների հետ:

⁵ Հովհաննիսյան Ա., «Խոհանոցը»՝ երեխայի գործունեության միջավայր, Նախաշավիղ 4, 2017, էջ 49:

Նախ երեխաները դդումի գովքն են կատարում:

Աղջկեք, պար բռնեցեք,
Դդումի հասակ գովեցեք,
Այ հասակ, բարձր հասակ,
Կվայելե դափնե պսակ:
Աղջկեք, պար բռնեցեք,
Դդումի գոյնը գովեցեք,
Այ դդում, կարմիր դդում,
Արևի պես պայծառ դդում:
Աղջկեք, պար բռնեցեք,
Դդումի համը գովեցեք,
Այ դդում, համով դդում,
Մեղրից անուշ, քաղցր դդում:

Գովք

— Գովենք, գովենք, ու՛մ գովենք:
— Դդումին գովենք:
Գովենք, գովենք, ում գովենք,
Ջան, դդում, ջան, ջան,
Դդումի համը գովենք,
Ջան, դդում, ջան, ջան:
Դդում նստե ծառի տակ,
Ջա՛ն, դդում, ջա՛ն, ջա՛ն,
Չամչին առե թևի տակ,
Ջա՛ն, դդում, ջա՛ն, ջա՛ն:

Դե իսկ երբ արդեն դդումը մաքրում ենք, անհրաժեշտ մթերքները շերտ առ շերտ դասավորում երգում ենք ղափամային նվիրված երգը.

Հեյ, ջան, ղափամա,

Համով, հոտով ղափամա,

Հեյ, ջան, ղափամա,

Մեղրը մեջը ղափամա,

Հեյ, ջան, ղափամա,

Յուղը մեջը ղափամա,

Հեյ, ջան, ղափամա,

Մեջը չամիչ, ղափամա,

Հեյ, ջան, ղափամա,

Մեջը բրինձ, ղափամա:

Հեյ, ջան, ղափամա,

Համով, հոտով ղափամա,

Ջա՛ն, հեյ ջան, հեյ ջան, հեյ ջան:

Հեյ, ջան, ղափամա,

Համով, հոտով ղափամա,

Հեյ, ջան, ջան, ղափամա:

Յուրաքանչյուր ժողովուրդ առանձնահատուկ է ոչ միայն իր պատմությամբ ու մշակույթով, այլև իր խոհանոցով: Ինչպես հայկական ազգային բոլոր ճաշատեսակները, ղափաման նույնպես ունի ծիսական արարողակարգ:

Կշռադատման փուլ: Երբ դդումի մեջ արդեն անհրաժեշտ մթերքները դասավորում ենք, այն խոհարարը տանում է, որ դնի ջեռոցում, մենք երեխաների հետ սկսում ենք քննարկել մեր կատարած աշխատանքը: Երեխաները սկսում են կիսվել



իրենց տպավորություններով, պատմել, թե ինչ սովորեցին: Նախ հարցնում ենք, թե ինչ քայլեր պետք է կատարել դափամա պատրաստելու ժամանակ:

Երեխաները ասում են, որ նախ պետք է լվանանք մեր ձեռքերը, ապա չորացնենք: Պետք է խոհանոցում զգույշ լինենք, միմյանց օգնենք:

Պետք է անհրաժեշտ մթերքները նախօրոք լավ լվանանք:

Պետք է լսենք խոհարարի հրահանգները, որպեսզի ամեն ինչ համեղ ստացվի:

Երեխաների հետ հարցուպատասխանի միջոցով պարզում ենք, թե էլ ինչ ազգային ուտեսնտեր կան, որոնք ենք միասին պատրաստել, ինչ կցանկանան նրանք, ոչ միասին պատրաստենք, ուտեստին նվիրված էլ ինչ երգեր գիտեն:

Վերհիշում ենք մեր լավաշթխեքի ծեսը, թթուդրեքի ծեսը: Նայում ենք մեր նկարները:





Ամփոփում: Սաները մանկապարտեզում իրականացնում են տարատեսակ գործունեություններ, որոնց նպատակը որոշակի գիտելիքներ, հմտություններ, կարողություններ սովորելն է: Դրանց մեջ ուրույն տեղ և դեր ունեն ազգայինն ու ավանդականը: Իհարկե ծեսի իրականացումը պահանջում էր երկար նախապատրաստական աշխատանք: Նախ երեխաների հետ սովորում ենք ծեսին նվիրված երգեր: Երեխաներին ներկայացնում ենք ծեսի նշանակությունը, նրանց նախապատրաստում ծեսին: Ապա միասին պատրաստում և համտեսում ենք կերակուրը:

Տնօրենի կարծիք

«Աշուն» թեման ամփոփվեց հին հայկական ուտեստի՝ Ղափամայի պատրաստմամբ: Պարապմունքի ընթացքում դաստիարակն ինչպես միշտ առաջնորդվեց ԽԻԿ համակարգով: Երեխաները ունկնդրեցին և երգեցին ազգային երգեր, պարեցին, ծանոթացան Ղափամայի պատմությանը և բաղադրիչներին, ապա սկսեցին պատրաստել:

Պարապմունքն նպաստեց երեխաների խոսքի, հաղորդակցական հմտությունների և ճանաչողական գործընթացների զարգացմանը:

Մեթոդիսի վերլուծություն

Դաստիարակ Ս. Սահակյանի կողմից պատրաստված պարապմունքը հազեցած էր անհրաժեշտ նյութերով և պարագաներով: Հին ազգային ուտեստի Ղափամայի պատրաստան ընթացքին երեխաները մասնակից լինելով ընդլայնեցին խոսքի և հաղորդակցական կարողությունների զարգացման հնարավորությունները: Խմբասենյակում տիրող մթնոլորտը երեխաներին հնարավորություն տվեց ազատ դրսևորվել:

Եզրակացություններ

Այսպիսով նման միջոցառումները մանկական հուզաշխարհում դառնում են վառ հիշողություն և ուղեկցում նրան ողջ կյանքի ընթացքում:

Հայկական ծեսերը և ազգային ավանդույթները 21-րդ դարի անընդհատ հարափոփոխ աշխարհում աստիճանաբար դուրս են մղվում մեր կյանքից և տարիների ընթացքում դառնում անցյալի հիշողություն:

Ցավալի է, բայց փաստ, որ այժմ արդեն շատ ու շատ ազգային գեղեցիկ տոներ ու ծիսակատարություններ անցել են մոռացության գիրկը՝ դառնալով միայն ավագ սերնդի հիշողությունը:

Մանկավարժներիս նպատակը պետք է լինի, հնարավորության սահմաններում, մանկավարժական նոր մեթոդներով ու թարմ մտահղացումներով նոր սերնդին մասնակից դարձնել ազգային տոներին և ծեսերին:

Մանկապարտեզը համակողմանիորեն զարգացած մարդու ձևավորման, բարոյական և հոգևոր արժեքների միասնության ապահովման հենասյուններից մեկն է:

Գրականության ցանկ

1. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Երևան, 2005:
2. Հովհաննիսյան Ա., «Խոհանոցը»՝ երեխայի գործունեության միջավայր, Նախաշավիղ 4, 2017:
3. Մկրտչյան Մ., Ազգային ավանդույթներն ու ծեսերը՝ ուսումնական միջավայր <https://marinemkrtchyan.wordpress.com/2021/10/12/տարվա-լավագույնները-մրցույթ/>
4. Մկրտչյան Մ., Հանրակրթական ծես. ստեղծում, փոխանցում <https://marinemkrtchyan.files.wordpress.com/2020/03/d580d5a1d5b6d680d5a1d5afd680d5a9d5a1d5afd5a1d5b6-d5aed5a5d5bd.-d5bdd5bfd5a5d5b2d5aed5b8d682d5b4-d683d5b8d5add5a1d5b6d681d5b8d682d5b4-1.pdf>